

ԲԱՑ ԴԱՍ

ԱՊԱՀՈՎ ՀԱՄԱՑԱՆՑ

Դասի նպատակը – գիտելիքներ համացանցի ապահով գործածման վերաբերյալ:

Արևմտուիի Հակորջանյան, Եվրասիա միջազգային համալսարանի վարժարան

Դասի խնդիրները՝

Կրթական

Համացանցում անհրաժեշտ տեղեկատվության արդյունավետ որոնման կարողությունների, հմտությունների զարգացում, վերլուծական կարողությունների զարգացում:

Դաստիարակչական

Աշակերտների հետաքրքրությունները ուղղել դեպի իմաստալից բովանդակությամբ կայքեր: Խուսափել անպարկեշտ և վտանգավոր էջերից: Վիրտուալ տարածքում ճիշտ կողմնորոշվելու ընդունակությունների ձևավորում:

Անհրաժեշտ սարքավորումներ. Համացանցին միացված համակարգիչ, էլեկտրոնային գրատախտակ, գրիչներ:

Դասարանը բաժանված է 3 մասի.

1. հաղորդավար

2. հրավիրված մասնագետներ

3. հանդիսատես

Դասի պլան-սցենար

- **Դասի նպատակի ներկայացում** /ներկայացնում է հաղորդավարը /2-3 րոպե/:
- **Հարց ու պատասխան** հաղորդավարի և հրավիրված մասնագետների միջև, քննարկումներին մասնակցում է նաև լսարանը /10 րոպե/:
- **Գրատախտակի ձևավորում** - էլեկտրոնային պաստառի ձևավորում, այն ձևավորվում է դասի ընթացքում աշակերտների անմիջական մասնակցությամբ Microsoft Office Publisher ծրագրով /15-20 րոպե/:
- **Էլեկտրոնային կույթերի** (ապահով համացանց) **ցուցադրում** /5-7 րոպե/:
- **Թեստ** “Ապահով համացանց” կից ներկայացվում է ֆայլը /5-6 րոպե/:

Դասի ընթացքը

Դասի նպատակը 2 րոպե-Համացանցը մտել է մեր առօրյա, և մենք այլևս չենք պատկերացնում մեր կյանքն առանց դրա: Ինչպես սովորական կյանքում մենք կարող ենք հանդիպել լավ ու վատ երևույթների, այնպես էլ վիրտուալ տարածքում: Այն էլ կյանք է էլեկտրոնային միջավայրում և ունի իր առավելություններն ու թերությունները:

Հարցերի քննարկում.

Հաղորդավարը հարցեր է ուղղում հրավիրված մասնագետներին՝ պրոֆեսոր Ապահովյանին և դոցենտ Համացանցյանին:

Հարցեր և պատասխաններ

1. *Ինչ է համացանցը:* - Համացանցը հսկայածավալ ինֆորմացիոն տարածք է, որը հնարավորություն է տալիս միլիոնավոր մարդկանց համագործակցել: Համացանցը փոխում է մարդկանց շփման, հաղորդակցման, գործարարության ձևերը, ժամանցի եղանակները: Այն այսօր պետական սահմաններ չի ճանաչում /պատասխանում է դոցենտ Համացանցյանը/:

- Հանդիսատեսը տեղից մասնակցում է քննարկումներին: Էլեկտրոնային գրատախտակին ձևավոնվում է էլեկտրոնային պատասառ, աշակերտների անմիջական մասնակցությամբ Microsoft Office Publisher ծրագրով: Աշակերտները մոտենում են գրատախտակին և իրենց նկատառումները, ընտրած նկարները տեղադրում ֆայլի վրա:

2. *Խոսենք համացանցի վտանգների մասին /հաղորդավար/:*

Համացանցի վտանգները օրեցօր շատանում են: Դրանք ունեն տեխնիկական և անձնական բնույթ: Համացանցը պետք է օգտագործել կարիքների համար, չդարձնել բնակավայր, այն օժանդակ գործիք է: Ավելանում են նաև վնասակար ծրագրերի քանակը, դրա համար պետք է օգտագործել օպերացիոն համակարգերի հնարավորությունները, կամ տեղադրել հատուկ ծրագրեր /պրոֆեսոր Ապահովյան/:

Վնասակար ծրագրերի տարածման ճանապարհներ են էլեկտրոնային փոստը, ֆայլերի փոխանակման համակարգերը, կոտրված կայքերը, տեղեկույթի կրիչները, ոչ արտոնագրված ծրագրերը, օպերացիոն համակարգերի խոցելի գործառույթների օգտագործումը /դոցենտ Համացանցյան/:

- Հանդիսատեսը տեղից մասնակցում է քննարկումներին: Էլեկտրոնային գրատախտակին <Հասկացությունների քարտեզի>> մեթոդով կատարվում են գրառումներ, պատրաստվում է ֆայլ <<համացանցի վտանգները>> և կցվում էլեկտրոնային պաստառին /նայել 4-րդ էջը/:

3.Խոսենք համացանցի առավելությունների մասին /հաղորդավար/:

Համացանցի առավելություններից է դրա կրթական նպատակներով օգտագործումը: Այն հազեցած է գրադարաններով, թանգարաններով, կրթական բազմաբովանդակ նյութերով, խաղերով: Ցանցում մարդիկ կարող են շփվել անտեսելով սահմանները: Արագորեն ստանալ ինֆորմացիա, փոխանակել ֆայլեր /պատասխանում է պրոֆեսոր Ապահովյանը/:

- Հանդիսատեսը տեղից մասնակցում է քննարկումներին: Էլեկտրոնային գրատախտակին <Հասկացությունների քարտեզի>> մեթոդով կատարվում են գրառումներ, պատրաստվում է ևս մեկ ֆայլ <<համացանցի առավելությունները>> և կցվում էլեկտրոնային պաստառին /նայել 4-րդ էջը/:

Էլեկտրոնային պաստառը ստանում է վերջնական տեսք/ նայել էջ 6/:

Որից հետո թվով **3 տեսահոլովակի ցուցադրում**, դրանք պատրաստել են 10 և 11-րդ դասարանների աշակերտները:

Առաջին տեսահոլովակները պատրաստվել են Movie Maker ծրագրով, 11-րդ դասարանի աշակերտուհիները , դիտեք՝

<https://www.youtube.com/watch?v=Vkv7YXL0PTU>

Երկրորդ և երրորդ անիմացիոն տեսահոլովակները պատրաստել է 10-րդ դասարանի աշակերտուհի Սարգսյան Անահիտը goanimate.com կայքում, դիտեք՝

http://goanimate.com/videos/0JsrO6eUpx_w?utm_source=social&utm_medium=facebook&utm_campaign=usercontent

http://goanimate.com/videos/OLFddmLU926c?utm_source=social&utm_medium=facebook&utm_campaign=usercontent

Թեստավորում “Ապահով համացանց”/կազմել եմ ես, թեստը լրացնում և հանձնում է ամբողջ դասարանը, կից ներկայացվում է ֆայլը /նայել 5-րդ էջը /:

Ապահով համացանց Թեստ /նշեր 1 ճիշտ պատասխան/

1. Երբ որևէ մեկը Ձեզ պետք է էլեկտրոնային նամակ ուղղարկի, նրան եք փոխանցում Ձեր

- Էլեկտրոնային փոստի հասցեն
- Հեռախոսահամարը
- Գաղտնաբառը

2. Ֆայլերի փոխանակման ժամանակ հարկավոր է գուշանալ

- Ֆայլի ծավալից
- Լրտեսային ծրագրերից
- Ինտերնետի արագությունից

3. Սոցիալական ցանցերի լավ կողմերից է

- Մեծահասակներ, ովքեր թարցնում են իրենց տարիքը
- Հեղինակային աշխատանքների ցուցադրում
- Կախվածություն ինտերնետից

4. Ցանցում երեխաներին հարկավոր չէ լրացնել

- Անունը
- Անձնական ողջ տվյալները
- Էլեկտրոնային փոստի հասցեն

5. Ինչ է համացանցային հրապատը /Internet Firewall/

- Խանգարող միջոց
- Օգնող, գտող միջոց
- Ոչինչ էլ չի անում

6. Վիրուսը

- Վնասում է համակարգչում եղած ինֆորմացիան
- Արագացնում է համակարգչի աշխատանքը
- Ապահովում է անվտանգ միջավայր

7. Կիբերհանցագործություն է

- Նամակագրությունը
- Շանտաժը
- Ծանոթությունը ինտերնետ տարածքում

8. Սպամ – Spam է

- Անցանկալի հաղորդագրություն, փոստաղբ
- Կարևոր նամակ
- Օգտակար ինֆորմացիա

9. Հեղինակային իրավունք /Copyright / է

- Ուրիշից արտագրած նյութ
- Անձնական ստեղծագործություն
- Գրագողություն

10. Համացանցում տեղեկատվությունը

- Միշտ ճշգրիտ է
- Ոչ միշտ է հավաստի
- Արդիական է

